Հոլմս – Հավանաբար ամենահայտնի մեջբերումը Ամերիկյան Հասարակական Իրավունքի մեջ – “ Օրենքի կյանքը Փորձն է ոչ թե Տրամաբանությունը “:

1. Իրավաբանության բնույթը, որպես մասնագիտություն

Պատճառը՝ թե ինչո՞ւ է այն կայանում մասնագիտություն, ինչո՞ւ են մարդիկ վճարում իրավաբաններին իրենց փոխարեն վիճաբանելու, կամ խորհուրդ տալու համար, կայանում է նրանում, որ այնպիսի հասարակարգում ինչպիսին մերն է, հասարակական ուժերի կառավարումը որոշ դեպքերում վստահված է դատավորներին, եւ, եթե հարկ լինի, ամբողջ պետության ջանքերը կներդրվեն նրանց վճիռներն եւ որոշումներն կատարելու համար:

2. Օրենքը, որպես կանխորոշում, թե երբ է պետությունը ուժ գործադրելու

“Վերցրնենք հիմնահարցը թե Ի՞նչ է ներկայացնում իրենից օրենքը: Որոշների կարծիքով, դա այն է, ինչը տարբերվում է Մասաչուսեցի կամ Անգլիայի դատարաններում ընդունած որոշումներից, դա փաստարկների համակարգ է, էթիկական սկզբունքների, կամ աքսեոմների, կամ ավելի վատ որոշումների հետ համընկնող, կամ ոչ եզրակացություն: Դիտելով մեր ընկեր “վատ մարդու” տեսանկյունից՝ կհասկանանք, որ նա անտարբեր է աքսեոմների եւ եզրակացությունների նկատմամբ, սակայն շատ է ցանկանում իմանալ, թե իրականում ի՞նչ կանեին Մասաչուսեցի կամ Անգլիայի դատարանները: Ես հակված եմ այդ կարծիքին: **Օրենք բառի տակ Ես ի նկատի ունեմ կանխատեսումները, դատարանի իրական գործողությունների վերաբերյալ եւ ոչ ավելին**”:

- Holmes, The Path of the Law, 10 Harvard Law Review 457 (1897).
http://www.constitution.org/lrev/owh/path_law.htm

- Մարդիկ ցանկանում են իմանալ, թե ի՞նչ հանգամանքներում եւ որքանո՞վ է իրենցից ուժեղ այդ համակարգին հանդիպելու վտանգի գործոնը, եւ հետեւաբար անհրաժեշտ է դառնում ընկալել, թե ե՞րբ պետք է վախենալ այդ ուժից: Այս դեպքում մեր ուսումնասիրության առարկան է դառնում կանխորոշումը՝ հասարակական ուժի գործելու հաճախականությունը դատարանների միջոցով:

- Եթե ցանկանում եք գիտենալ օրենքները, եւ ոչ ավելին, պետք է դիտարկեք այն “վատ մարդու” տեսանկյունից, որին հետաքրքիր են այդպիսի գիտելիքները միայն նյութական հետեւանքները կանխատեսելու համար, եւ ոչ թե “լավ մարդու” տեսանկյունից, որը, օրենքի սահմաններում կամ նրանցից դուրս գործելու հիմքերը գտնում է խղճի աղոտ համոզմունքներում:

- Օրենքը որպես կանոն գործողության հետեւանք է:

- Պարզ երեւում է, որ “վատ մարդը”՝ ոչ պակաս քան “լավը”, ցանկանում է խուսափել հասարակական ուժերի հետ բախումներից, եւ այդ պատճառով կարելի է պարզ տեսնել բարոյականության եւ օրենքի տարբերության գործնական կարեւորությունը: Մարդ, որի համար կարեւոր չեն էթիկայի կանոնները, որոնցով

առաջնորդվում են իր հարեւանները, ամեն դեպքում բավականին կարեւորում է այն, որ ստիպված չլինի վճարելու գումարներ, կամ եթե կարողանա, հնարավորինս խուսափի բանտից:

- Եթե դիտենք մեր ընկեր “վատ մարդու” տեսանկյունից, կհասկանանք, որ նա անտարբեր է աքսեոմների եւ եզրակացությունների նկատմամբ, բայց շատ է ցանկանում իմանալ, թե իրականում ի՞նչ կանեին Մասաչուսեցի կամ Անգլիայի դատարանները: Ես հակված եմ այդ կարծիքին:

- Հասարակությունը վճարում է վնասների դիմաց, եւ պարտավորությունների խնդիրը, եթե բավական խորանանք այդ հարցի մեջ, իրականում կայանում է նրանում, թե որքան ցանկալի է որ հասարակությունը երաշխավորի այն մարդկանց ապահովությունը, որոնց աշխատանքն օգտագործում է:

3. Օրենքը Տրամաբանություն չէ, այլ Ավանդույթներ, Պատմություն, Նախադեպ

- Օրենքի կյանքը Փորձն է ոչ թե Տրամաբանությունը

- Կարելի է տրամաբանական ձեւ տալ ցանկացած եզրակացությանը: Միշտ էլ կարելի է պայմաններ ենթադրել պայմանագրում: Բայց ինչո՞ւ ինչ-որ բան ենթադրել: Դա որեւիցէ համայնքի կամ դասի վերաբերյալ ձեր համոզմունքների պատճառով է, որեւիցէ ռազմավարության նկատմամբ ձեր կարծիքներն են, կամ կարճ ասած, ձեր վերաբերմունք է մի հարցի, որը չի ենթարկվում կոնկրետ քանակական հաշվարկների, եւ հետեւաբար չի ենթարկվում հստակ տրամաբանական լուծումների: Այդպիսի հարցերը իրական մարտի դաշտեր են հանդիսանում, որտեղ միջոցները չեն ստեղծված որոշումների համար, որ ճիշտ լինեն բոլոր ժամանակներում եւ, որտեղ որոշումները մարմնավորում են միայն տվյալ մարմնի նախասիրությունները, կոնկրետ տեղում եւ ժամանակում: Մենք չենք գիտակցում, թե որքան ծավալուն է մեր օրենքի այն մասը, որը ենթակա է վերանայման՝ հասարակական գիտակցության, սովորույթների չնչին փոփոխման դեպքում:

- Ներկայումս շատ դեպքերում, եթե ցանկանում ենք հասկանալ, թե ինչո՞ւ է օրենքի կանոնը ստացել որոշակի ձեւ, քիչ թե շատ ձգտում ենք իմանալ, ինչո՞ւ այն ընդհանրապես գոյություն ունի՝ անդրադառնում ենք Ավանդույթներին:

- Օրենքի տրամաբանական ուսումնասիրությունը մեծ մասամբ պատմության ուսումնասիրություն է: Պատմությունը պետք է կազմի ուսումնասիրման մաս, քանի որ առանց նրա մենք չէինք կարողանա իմանալ կանոնների ճշգրիտ ծավալները, որոնք իմացությունը պարտադիր է մեզ համար: Այն ռացիոնալ ուսումնասիրության մասն է, քանի որ հանդիսանում է առաջին քայլը դեպի կրթված թերահավատությունը, այսինքն՝ դեպի այդ կանոնների արժեքների մտածված վերանայումը:

4. Օրենք, Բարոյականություն, Ընտրության թեորիա

Օրենքը, եթե բարոյականության մաս չէ, ապա սահմանափակված է նրանով:

Օրենքը չի կարող պահանջել ավելի լավ արդարացում, քան մարդու հիմնական բնազդները:
Գիտենք, որ այն ամենի համար ինչ որ ունենք, վճարում ենք, եւ մեզ սովորեցրել են համեմատել ստացած արտոնությունները կորցրածի հետ, եւ գիտենալ թե ինչ ենք անում, երբ ընտրում ենք:

Մոլորությունը, որը ես մատնանշում եմ, այն հասկացությունն է, որ միակ ուժը օրենքի զարգացման գործում տրամաբանությունն է:

Դատավոր Օլիվեր Վենդել Հոլմս Կրտսեր (1841-1935)

Մեջբերում

Օլիվեր Վենդել Հոլմս կրտսերը ծնվել է Բոստոնում, 1841թ. մարտի 8-ին: Նա կնքեց իր մահկանացուն իր 94-րդ ամյակից երկու օր առաջ: Նրա հայրը, Օլիվեր Վենդել Հոլմս ավագը բժիշկ էր, դասավանդում էր բժշկություն Հարվարդում, եւ նովելների, բանաստեղծությունների, հումորային էսսեների հեղինակ էր: Այսպիսով, Հոլմսը մեծացել է կրթված եւ ապահովված ընտանիքում:

Հոլմսը Բոստոնում ընդունվեց մասնավոր դպրոց, եւ ինչպես իր հայրը՝ շարունակեց ուսումը Հարվարդում: Երիտասարդ Հոլմսը տպավորված չէր այդ տարիների Հարվարդով, նա ուսումնական կուրսը գտնում էր բթացնող (Ավելի ուշ Հենրի Ադամսը նշել է, որ “Հարվարդը քիչ է սովորեցնում եւ այդ քիչն էլ վատ”): Նա գործածում էր իր գրական տաղանդը, որպես Հարվարդի ամսագրի խմբագիր եւ գրում էր բազմաթիվ էսսեներ: Նրա համալսարան ավարտելը նույնիսկ մեծ հարցի տակ էր, քանի որ նա հրապարակավ հանդիմանություն ստացավ ֆակուլտետի կողմից դասախոսին “անհարգալից” վերաբերվելու համար: Հոլմսը ակնհայտ է, որ ընդունեց դա որպես հրապարակային վիրավորանք եւ դուրս եկավ՝ որպեսզի նախապատրաստվի Քաղաքացիական պատերազմին: Նրա ջոկատը միանգամից չմեկնեց ռազմաճակատ, եւ Հոլմսին համոզեցին վերադառնալ եւ ստանալ դիպլոմը:

Հարվարդը ավարտելուց հետո, Հոլմսը Քաղաքացիական պատերազմի ծառայության անցավ: Նա եռակի վիրավորվել էր ճակատամարտում եւ տառապում էր բազմաթիվ հիվանդություններով: Ու թեեւ նա հետագայում փառավորում էր այդ տարիները, հրաժարվեց շարունակել ծառայությունը, երբ ժամկետը լրացավ: Հոլմսը ակնհայտորեն եւ արդարացիորեն գտնում էր, որ արել էր ավելին քան պարտավոր էր, եւ գոյատեւել էր բազմաթիվ մարտերում, որպեսզի շարունակի փորձել ճակատագիրը:

Վերադառնալով Բոստոն, Հոլմսը որոշեց զբաղվել իրավունքով, եւ ընդունվեց Հարվարդի Իրավաբանական Դպրոց: Թեեւ սկզբում նա համոզված չէր, որ իրավունքը կդառնա իր մասնագիտությունը, սակայն շուտով նա ամբողջովին տրվեց

ուսմանը եւ որոշեց, որ իրավունքը կդառնա իր ամբողջ կյանքի գործը: Նա նվրիվեց իրավունքին, բայց ոչ անպայման մասնավոր աշխատանքին:

Պատադիր բանավոր քննությունն անցնելուց հետո, Հոլմսը 1867թ. ընդգրկվեց Մասաչուսեցի Փաստաբանների Միություն: Հաջորդ տասնչորս տարիների ընթացքում նա զբաղվում էր իրավունքով Բոստոնում: Բայց նրա սերը դեպի իրավաբանական գիտությունը առավել քան միապաղաղ ամենօրյա աշախատանքը, ակնհայտ էր այդ տարիների ընթացքում: Նա աշխատում էր "Քենտի Մեկնաբանությունների" նոր հրատարակության վրա՝ մի հսկայական աշխատություն, որը տևեց չորս տարի, եւ դարձավ *"Ամերիկյան Լոու Ռիվյու"*-ի խմբագիրը:

Հոլմսը ամուսնացավ Ֆաննի Դիքսվելի հետ 1872 թվականին: Նրանք ճանաչում էին միմյանց, երբ Հոլմսը տաս տարեկան էր, եւ նա այն մասնավոր դպրոցի սեփականատիրոջ աղջիկն էր, որտեղ սովորել էր Հոլմսը: Նրանց ամուսնությունը անզավակ էր եւ շարունակվեց մինչեւ կնոջ մահը, 1929 թվականը:

Հոլմսին հրավիրել էին կարդալու տասներկու դասախոսություն Ամերիկյան Իրավունքի Հիմքերի մասին, որոնք հիմք հանդիսացան նրա "Հասարակական Իրավունք" ամենահայտնի աշխատության համար՝ հրատարակված 1881թ.: Հոլմսը հարցի տակ դրեց Անգլո - Ամերիկյան արդարադատության մեծամասնության պատմական հիմքերը: Աշխատանքը պարունակում է ամենահայտնի մեջբերումը. " Օրենքի կյանքը Փորձն է ոչ թե Տրամաբանությունը": Նա եկավ այն համոզմունքին, որ նույնիսկ հնացած եւ առաջին հայացքից անտրամաբանական իրավական ուսմունքները պահպանվել են, քանի որ գտել են նոր կիրառում: Հին իրավական ձեւերը հարմարվել են նոր հասարակական պայմաններին:

"Հասարակական Իրավունք"-ի հրատարակումից շատ չանցած Հոլմսին առաջարկեցին իրավաբանության դասախոսի պաշտոն Հարվարդում: Որոշակի լարված բանակցություններից հետո, հիմնականում կապված փողի հետ, քանի որ Հոլմսը հարուստ չէր եւ նրան եկամուտ էր պետք ապրուստի համար, նա ընդունեց առաջարկը: Սակայն մեկ կիսամյակ դասավանդելուց հետո հրաժարական տվեց, որպեսզի ընդունի նշանակումը Մասաչուսեց նահանգի Գերագույն Դատարան: Թափուր պաշտոնը բացվեց Հանրապետական նահանգապետի ժամկետի լրանալու ընթացքում, բայց քանի որ Դեմոկրատ էր նրան հաջորդողը, նշանակումը պետք է ձեւակերպվեր շատ արագ: Սակայն Հոլմսի Հարվարդից հեռանալու փաստը որոշ զարմանք առաջացրեց, քանի որ նա հինգ հիմնական դասախոսներից էր, եւ նրան վարձատրելու համար հատուկ գումարներ էին հայթայթվել:

Հոլմսը աշխատեց Գերագույն դատարանում քսան տարի՝ դառնալով գլխավոր դատավոր: Նա սիրում էր աշխատանքը՝ իրավաբանական ուսումնասիրությունները եւ գործերի "գրառումը": Հոլմսը գտնում էր աշխատանքը դյուրին՝ համենայն դեպս իր համար: Նա միանգամից էր ընկղմվում խնդրի բնույթի մեջ եւ նրա մտավոր կարողությունները շատ ավելի բարձր էին իր պաշտոնակիցներից: Հոլմսը երբեք համեստ չէր, հատկապես երբ խոսքը վերաբերվում էր իր գերազանցությանը

համապաշտոնյա դատավորների նկատմամբ: Թեեւ նա երջանիկ էր Գերագույն Դատարանում, սակայն ցանկանում էր ավելի շատ մարտահրավերներ եւ փառք:

Բարձրագույն մասնագիտական առաջընթացի հնարավորությունն եկավ 1902 թվականին, երբ նախագահ Թեոդոր Ռուզվելտը նշանակեց նրան աշխատելու Միացյալ Նահանգների Գերագույն Դատարանում: Նրա նշանակումը կարող էր երբեք էլ տեղի չունենալ, եթե դատարանում “New England”-ի աթոռը թափուր չլիներ Ռուզվելտի պաշտոնավարության ընթացքում: Ե’ւ Ռուզվելտը, ե’ւ Հոլմսը Մասաչուսեցի սենատոր Հենրի Քեբոտ Լոջի ընկերներն էին: Լոջը համոզեց Ռուզվելտին, որ Հոլմսը “ապահով” է՝ այսինքն բարյացկամ է Ռուզվելտի առաջադիմական քաղաքականությանը: Ռուզվելտը հետագայում ափսոսաց նշանակման համար, քանի որ Հոլմսը մասնակցեց նրա որոշ նախաձեռնությունների դադարեցմանը:

Օլիվեր Վենդել Հոլմս կրտսերը ծառայեց Գերագույն Դատարանում երեսուն տարի, առավել քան որեւէ մեկը: Նրան անվանում էին “Մեծ Դիսիդենտ”, քանի որ նա հաճախ էր գժտվում իր համագործակից դատավորների հետ եւ կարողանում էր պերճախոսությամբ արտահայտել իր անհամաձայնությունը: Լուիս Բրանդեն հաճախ էր միանում Հոլմսի քննադատություններին, եւ նրանց հայացքները մի քանի տարվա ընթացքում, դառնում էին մեծամասնության կարծիքը: Վատառողջ լինելու հետևանքով Հոլմսը պաշտոնաթող եղավ 1932թ. իննսունամյա հասակում: Նա մահացավ 1935թ. եւ աճյունը տեղադրվեց իր կնոջ կողքին՝ Առլինգթոնի ազգային գերեզմանատանը:

Ավելի քան վաթսուն տարիների ընթացքում գրելով օրենքի մասին, Հոլմսի իրավաբանական փիլիսոփայությունը զարգացում ապրեց: Սկզբում նա հակված էր տրամաբանական, սիստեմատիկ կամ “գիտական” կոնցեպցիային: Բայց ժամանակի ընթացքում նա հանգեց այն կարծիքին, որ օրենքը ավելի շուտ որոշումների հավաքածու է, որը արտացոլում է առանձին դատավորների վճիռները կոնկրետ գործերում: Այսպիսով՝ օրենքի աճը փորձն է, ձեւավորված օրվա հասարակության մեջ գոյություն ունեցող իրական վեճերի արդյունքում:

Շատերի կողմից ընդունված, որպես “լիբերալ”, քանի որ հավատում էր խոսքի ազատությանը եւ աշխատավորների համախմբվելու իրավունքին, Հոլմսը շատ պահպանողական էր վիրավորանքի վերաբերյալ գործերի իր տեսակետով: Նա կողմնակից է, որ որոշում կայացնելիս, դատարանը պետք է գերակայություն տա օրենսդրի քաղաքականության կողմնորոշմանը:

Հոլմսը համարվում է Ամերիկյան Իրավունքի հսկաներից մեկը: Ոչ միայն այն պատճառով, որ այդքան լավ էր գրում, այլ նաեւ գրել է բազմաթի’վ աշխատություն-ներ երկար տարիների ընթացքում: Իրավաբանը, որը Հոմսից մեջբերում է փնտրում՝ միշտ գտնում է: Նույնիսկ Վաշինգտոնի Հարկային Տեսչության շենքին ամրագրված են նրա հայտնի հետեւյալ խոսքերը. “Հարկերը այն գինն են, որը մենք վճարում ենք քաղաքակիրթ հասարակության համար”: